



FOREST SUMMIT Global Action and Armenia

Co-Presented by

AUA ACOPIAN CENTER
for the ENVIRONMENT

ARMENIA
TREEPROJECT

Media Contact: T.K. Skenderian
Conventures, Inc.
tkskenderian@conventures.com
617-204-4239

Օրեգոնի պետական համալսարանի դոկտոր Էնթընի Ս.Դեյվիսը կբանախոսի անտառներին նվիրված առաջին համաժողովում:

Հոկտեմբերին Երևան կժամանի Օրեգոնի պետական համալսարանի Անտառագիտության քոլեջի դեկանի պաշտոնակատար, պրոֆեսոր Էնթընի Ս. Դեյվիսը:

Օգոստոսի 12, 2019 - Անտառագիտությանը նվիրված համաշխարհային համաժողովի կազմակերպիչներ «Էյ Թի Փի» բարեգործական հիմնադրամը և Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնը ուրախ են տեղեկացնել, որ միջոցառման գլխավոր բանախոսն է լինելու Օրեգոնի պետական համալսարանի Անտառագիտության քոլեջի դեկանի պաշտոնակատար, պրոֆեսոր, դոկտոր Էնթընի Ս. Դեյվիսը: Եռօրյա համաժողովը Հայաստանի մայրաքաղաքում կհամախմբի անտառագիտության առաջատար մասնագետների՝ քննարկումների, փորձի փոխանակման և մասնագիտական ցանցի ստեղծման նպատակով:

«Գազաթնաժողով հանուն անտառների. գլոբալ ջանքերն ու Հայաստանը» առաջին համաժողովում դոկտոր Դեյվիսը կբանախոսի երեքշաբթի՝ հոկտեմբերի 22-ի առավոտյան՝ մասնակիցներին ներկայացնելով գիտական հենք ունեցող հնարավորություններ, որ առկա են Հայաստանում և աշխարհում անտառների վերականգնման, պահպանման և կառավարման առաջընթացի համար:

«Մեծ ոգևորությամբ եմ պատրաստվում իմ ուսումնասիրությունները և փորձը ներկայացնել անտառներին նվիրված անդրանիկ գազաթնաժողովի մասնակիցներին», - ասում է Դեյվիսը, ով Հայաստանում աշխատել է մի շարք կազմակերպությունների, այդ թվում՝ «Էյ Թի Փի» հետ, անտառների վերականգնման և ծառերի տնկման ոլորտում: «Ինձ համար պատիվ է հնարավորություն ունենալ իմ մտորումները կիսելու համակարծիք մասնագետների հետ, և դա կատարել մի երկրում, որը հանձնառու է մինչև 2050թ. կրկնապատկել անտառային ծածկույթը: Այս համաժողովը տեղի է ունենում մի ժամանակաշրջանում, որը ճակատագրական է ամբողջ աշխարհի անտառների պահպանման համար : Հաշվի առնելով անտառների կարևորությունը կլիմայական փոփոխությունների դեմ մղվող պայքարում՝ մեծ խանդավառությամբ կմասնակցեմ այս համաժողովին»:

Դր. Դեյվիսը նաև գործառնության գծով փոխդեկան է Օրեգոնի պետական համալսարանի Անտառագիտության քոլեջում: Այն համարվում է անտառագիտության ոլորտում հետազոտական և կրթական գործունեություն ծավալող՝ աշխարհի առաջատար հաստատություններից մեկը: Վերջինս, ունենալով բազմաթիվ աջակիցներ, իրականացնում է հետազոտական նախագծեր՝ անտառների վրա հիմնված տնտեսություններն ընդլայնելու, անտառային ռեսուրսները տնօրինելու, ինչպես նաև նոր հայտնագործությունները գործիքների և տեխնիկայի վերածելու համար, որոնք կարող են բարձրացնել բնակիչների կենսամակարդակը և կայունացնել էկոհամակարգերը:



FOREST SUMMIT

Global Action and Armenia

Co-Presented by

AUA ACOPIAN CENTER
for the ENVIRONMENT

ARMENIA
TREEPROJECT

Media Contact: T.K. Skenderian
Conventures, Inc.

tskenderian@conventures.com

617-204-4239

Հայաստանում և աշխարհի այլ երկրներում անհրաժեշտ՝ անտառների պահպանման և վերականգնման ջանքերի շուրջ տարվող եռօրյա քննակումների և երկխոսության շրջանակներում, «Գազաթնաժողով հանուն անտառների. գլոբալ ջանքերն ու Հայաստանը» համաժողովը մասնակիցներին կընձեռի դաշտային այցելությունների հնարավորություն Դիլիջանի ազգային պարկ, Մարգահովտում «Էյ Թի Փի»-ի անտառվերականգնման տնկարան և անտառ, ինչպես նաև նոր ծանոթություններ ստեղծելու հնարավորություններ: Հոկտեմբերին համաժողովը հյուրընկալելուց զատ, «Էյ Թի Փի»-ն կնշի Հայաստանում 6 միլիոներորդ ծառի տնկումը: Համաժողովի, Հայաստանի ամերիկյան համալսարանի Յակոբեան բնապահպանական կենտրոնի կամ «Էյ Թի Փի»-ի մասին լրացուցիչ տեղեկատվության համար այցելեք <http://forestsummit.am> կայքը: